Արձանագրություն N 3

«ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան «02» ապրիլ 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աղաբեկյան
հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թումանյան,Գ.Սարգսյան,
Մ.Աբգարյան,Ն.Աթայան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.1. Ընտրված մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն «Սմարթլայն»ՍՊԸ-ի և Ա/Ձ Արմինե Պողոսյանի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2. «ԱԼՖԱ»ԱԿ-ի կողմից № 14 չափաբաժնի համար առաջարկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջվող տեխ.բնութագրին, ուստի հանձնաժողովը որոշեց մերժել հայտը և ծանուցել երկրոդ տեղ զբաղեցրած «Սմարթլայն»ՍՊԸ-ին ներկայացնելու նշված չափաբաժնի համար որակավորման փաստաթղթեր:«Սմարթլայն»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրչել է որակավորման փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատսխանում է հրավերի պահանաջներին:

1.3. Ա/Ձ Արթուր Ավետիսյանի կողմից ներկայացրած № 1, 2 և 3 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի հայտը: Ծանուցել է «ԱԼՖԱ»ԱԿ-ին ներկայացնելու նշված չափաբաժինների համար որակավորման փաստաթղթերը: «ԱԼՖԱ»ԱԿ-ն սահմանված ժամկետներում ներկայացրել է № 1, 2 և 3 չափաբաժինների համար որակավորման փաստաթղթերը, համաձայն որի առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

2. <u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնման

ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «ՍՄԱՐԹԼԱՅՆ»ՍՊԸ-ի, «ԱԼՖԱ»ԱԿ-ի և Ա/Ձ Արմինե Պողոսյանի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

3. «ՍՄ-ԳՀԱՊՁԲ- 2019/1» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում « ԱԼՖԱ»ԱԿ-ն, Ա/Ձ Արմինե Պողոսյանը և «Սմարթլայն»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝

N 1; 2; 3; 8; 10; 15 և 16 չափաբաժինների համար «ԱԼՖԱ»ԱԿ-ին;

N 13 չափաբաժնի համար Ա/Ձ Արմինե Պողոսյանին;

N 4; 5; 6; 7; 9; 11 ; 12 և 14 չափաբաժինների համար «Սմարթլայն»ՍՊԸ-ին;

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ս.Աղաբեկյան

Անդամ՝ _____ Մ.Թումանյան

_____ Գ.Սարգսյան

_____ Մ.Աբգարյան

_____ Ն.Աթայան

Քարտուղար՝ _____ Ս. Գրիգորյան